

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականին Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2017 թվականին մարզպետարան է մուտքագրվել՝ 13112 թղթակցություն, առաքվել՝ 9130 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ Ազգային ժողովից՝ 4, ՀՀ վերահսկիչ պալատից՝ 1, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 1349, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 1308, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 3020, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 3513, քաղաքացիներից՝ 3882 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 29: ՀՀ Նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 8, ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ տիկնոջ գրասենյակից՝ 1, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 115, ՀՀ նախարարություններից՝ 23 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2017 թվականին կատարվել է 961 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ: